ԱՆԻԻ ՊԱԼԱՏ-ՀՅՈՒՐԱՏՆԵՐԸ

Ճարտարապետության դոկտոր Ս. Խ. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

Հայկական պալատական համալիրները X—XI դդ. առավել նշանակալից ու տարատեսակ աշխարհիկ կառույցներն էին, և մեզ հասած օրինակներից ոչ մեկը չի կրկնել մյուսին։ Պատմիչների գործերում հիշատակություններ կան բազմաթիվ այս կարգի աշխարհիկ կառույցների մասին։ Այդ շենքերը առավել շատ հանդիպում են քաղաքներում, ընդ որում միանգամայն տրամաբանական է, որ նրանց գերակշռող մեծամասնությունը քանդվել է կամ արմատապես վերակառուցվել XII—XIII դդ. և պատահական չէ, որ մեզ քիչ աշխարհիկ կառույցներ են հասել IX—XI դդ., մինչդեռ նույն Անիի համարյա թե ամբողջ աշխարհիկ, բնակելի կառուցապատումը թվագրվում է XII—XIII դդ.։

Բագրատունյաց շրջանի միջնաբերդից դուրս գտնվող աշխարհիկ կառույցներից առավել նշանակալիցն է «հին քաղաքում», աշոտաշեն պարսպապատի արևելյան անկյան մոտ, քաղաքի մուտքից ոչ հեռու գտնվող աշխարհիկ շենքը, որը մասնագիտական գրականության մեջ հայտնի է Մանուչեի մզկիթ անունով։ Հնավանդ այս շենքը Շադդադյանների տիրապետության տարիներին մզկիթի է վերածվում և նրան հպված կառուցվում է մի բարձր ութանիստ մինարեթ։ Կառույցը երկհարկ է, ունեցել է ընդարձակ, չորս սենյակից բաղկացած թաղածածկ ներքնահարկ։ Վերին հարկը (28×33 մ) երեք զույգ ուժեղ սյուներով բաժանված է եղել երեք նավի, և ծածկի թաղերը հենվել են սյուներից ելնող և պատերի որմնասյուների վրա հանգչող կամարների վրա։ Երկրորդ հարկը նկուղի հետ է հաղորդակցվել փայտյա աստիճաններով։ Դահլիճը լուսավորվել է չորս մեծադիր լուսամուտներով, որտեղից հիանալի տեսարան է բացվում դեպի Ախուրյան գետի կիրճը, այն գոտևորող կամուրջը։ Շենքը մեզ է հասել խիստ վերակառուցված դրությամբ։ Նրա ամբողջ ծածկը, սյուների խոյակները ներառյալ, վերակառուցվել են Շադդադյանների ժամանակ։ Նույն այդ վերակառուցման արգասիքն է նաև այժմ գոյություն ունեցող աշտարակը։ Նոր ծածկի ձևերը բնորոշ են արդեն XII դարին. այստեղ առկա են և՛ ստալակտիտային փոխանցումներ, և՛ կարմիր ու սև գույնի քարերից շարված հարթ, «խճանկարային» առաստաղներ։ Ուշագրավ է, որ դահլիճը, բացի լուսամուտներից, լուսավորված է եղել երդիկների միջոցով։ Հ. Օրբելին ենթադրում է, որ այն ի սկզբանե կառուցվել է կա՛մ որպես պահակատուն, կա՛մ որպես մաքսատան շենք, քանզի կառուցված է եղել քաղաքի մուտքից ոչ հեռու, որտեղից լավ երևում են Ախուրյանի ձորը և կամուրջը[1]։

Սակայն թվում է, որ նման շքեղ սյունազարդ դահլիճով շինությունը, որի ինտերիերը ընդհուպ մոտենում է պալատական դահլիճների ինտերիերներին, հեռու է պահակատուն կամ մաքսատուն հասկացողությունից։ Սա կառուցվել էր այն ժամանակ, երբ քաղաքը դեռևս պարփակված էր աշոտաշեն պարսպա-

[1] И. А. Орбели, Избранные труды, Ереван, 1963, стр. 107.

պատի փոքր տարածքում և Անին դեռևս տարանցիկ առևտրի նշանավոր կենտրոն չէր։ Մեր կարծիքով այս շենքը իր բնույթով և ձևերով թագավորական կառույցների թվին է պատկանում և ոչ այլ ինչ էր, քան նշանավոր հյուրերի, օտար դեսպանությունների հյուրասրահը, ընդունման առաջին կայանը, որից հետո միայն նրանց հանդիսավոր կարգով ուղեկցում էին դեպի պալատ։

Իր հոյակերտ, մոնումենտալ ձևերով կառույցը ետ չէր մնում թագավորական պալատական շենքերից և կարելի է համարձակ կերպով համեմատել Անիի միջնաբերդի հյուսիս-արևելյան կողմի շքեղազարդ դահլիճների հետ։ Եվ իսկապես, նման շենքի կառուցումը մի ժամանակ, երբ նոր-նոր էր ձևավորվում միջնաբերդի պալատը, անշուշտ պետք է որ պայմանավորված լիներ այն մեծ նշանակությամբ, որ տրվում էր տվյալ կառույցին։ Շենքը ստեղծվել է մինչև 977 թ., մինչև Անիի հզոր, երկշար պարսպապատի հիմնադրումը, որովհետև պարսպապատի կառուցումից հետո նման մի պալատական շինություն, հյուրերի հանդիսավոր ընդունելության դահլիճ կհիմնեին ոչ թե քաղաքի խորքում, արդեն իր նշանակությունը կորցրած աշոտաշեն պարսպի մոտ, այլ նոր, հզոր պարսպի մուտքերից մեկի մոտ[2]։



Մանուչեի մզկիթը ձորի կողմից

Մոնումենտալ այս շենքը ինքնին վերցրած արտակարգ հետաքրքրություն է ներկայացնում ժամանակի աշխարհիկ ճարտարապետության զարգացման մակարդակը որոշելու տեսակետից։ Բանն այն է, որ այս վաղ շրջանից միակ, գրեթե ամբողջապես կանգուն կառույցն է, որ տպավորություն չի թողնում Բագրատունյաց տիրապետության շրջանում ևս վաղ միջնադարյան աշխարհիկ ճարտարապետության ավանդույթների շարունակության մասին, այն մասին, որ ընդարձակ ներքին տարածություններ ունեցող դահլիճները չեն մոռացվել նաև IX—XI դդ.։ Ավելին, վաղ միջնադարից մեզ չի հասել աշխարհիկ պալատական երկհարկ և ոչ մի կառույց, մինչդեռ այստեղ ունենք մի կոմպոզիցիա, որը զգալի առաջընթաց էր հնավանդ ձևերի նկատմամբ։ Այս հանգամանքն է հենց, որ առանձնակի նշանակություն է հաղորդում շենքին, եզակի դարձնում IX—XI դդ. ճարտարապետության մեջ առհասարակ։ Պատմական հաջորդ շրջանում մեծահարուստ, վաճառաշահ քաղաքի հյուրատները, քաղաք, որ XIII դարի առաջին կեսին արտակարգ զարգացում էր ապրել, իրենց բնույթով մոտենում են պալատական կառույցներին և նրանց մասին

---

2 Որ այդպիսի մի պալատ-ընդունարան իսկապես կառուցվել է հետագայում, XIII դարում, նոր պարսպապատի արևմտյան մուտքի մոտ, կտեսնենք ստորև։

մեզ են հասել մի շարք վկայություններ։ Անիում նրանք կոչվում էին նաև խանապարներ, պատկանում էին մեծահարուստներին և լինելով եկամտի զգալի աղբյուր, հաճախ նվիրվում էին եկեղեցիներին։

* * *

XII—XIV դդ. Անիի պալատական համալիրը պատկանում էր իր ժամանակի ամենանշանավոր աշխարհիկ համակառույցների թվին, սակայն եզակի չէր։ Անիում հայտնի են տվյալ դարաշրջանով թվագրվող մի շարք ուշագրավ պալատական շենքեր, որոնց առանձին գծերը և հատկապես ծավալատարածական լուծումները ուրույն հետաքրքրություն են ներկայացնում, մանավանդ որ Անիի միջնաբերդի խիտ կառուցապատման պայմաններում դժվար է խոսել աշխարհիկ շենքերի ծավալային մշակման, ճակատների գեղարվեստական լուծման մասին։ Ահա այս առումով մեծ նշանակություն են ստանում Անիի շահաստանի ազատ տարածքներում շինված իշխանական պալատները, որոնք ունեին կարևոր քաղաքաշինական նշանակություն և թարմ մոտիվներ էին մտցնում քաղաքի կառուցապատման մեջ։

Այս կարգի շենքերից առավել նշանակալիցներից է այսպես կոչված Պարոնի պալատը քաղաքի հյուսիս-արևմտյան ծայրում, պարսպապատից ոչ հեռու, այնտեղ, որտեղ միանում են Ծաղկոցաձորը և Իգաձորը։ Շենքը կառուցված է անմիջապես ձորափին։ Արևմտյան պատը դրված է կիրճի եզրին, դեպի ուր և բացվում են լուսամուտները։ Աշխարհիկ կառույցների նման դասավորությունը եզակի երևույթ չէր Անիում, և այս տեսակետից մեզ հետաքրքրող շենքի տեղաբաշխումը ընդհուպ մոտենում է Բագրատունիների ժամանակ կառուցված այսպես կոչված Մանուչեի մզկիթին։ Պարոնի պալատի դեպի ձորն ուղղված մասը եռահարկ էր, ընդ որում առաջին հարկը ծածկված էր լայնաթռիչք, ուժեղ թաղերով։ Քաղաքի կողմն ուղղված մասը երկհարկ էր, և միջհարկային ծածկերը հենվել են փայտե գերանների վրա. այդ մասին են վկայում պատերի մեջ արված անցքերը։ Շենքի անկանոն հատակագծային ձևերը հիմնականում պայմանավորված են տեղանքի բարդ պայմաններով և թերևս քաղաքի այս մասի մինչ այդ եղած կառուցապատումով։ Պատերի հարթությունները մեծ մասամբ խուլ են։ Այդ հանգամանքը խստորեն հակադրվում է շենքի անկյունային մասում տեղավորված շքեղ, երկհարկ շքամուտքին, որը մշակված է գեղարվեստական մեծ հմտությամբ և բարձր ճաշակով։

Դժբախտաբար հուշարձանը հանգամանորեն չի ուսումնասիրվել, մանրամասն չի չափագրվել (կա միայն Թ. Թորամանյանի սխեմատիկ չափագրությունը) և նույնիսկ ինչպես հարկն է չի լուսանկարված բոլոր կողմերից։ Այցելուները հիշատակում են թաղակապ ներքնահարկերի ամուր և ամփոփ կառուցվածքը, որտեղ, ինչպես նշում է Հ. Օրբելին, «առաստաղները շատ բարձր են, ծածկված հիանալի թաղերով. կան միջանցքներ և խուլ սենյակներ։ Արտակարգ հետաքրքիր է ներքին վանդակը, որի միջոցով կապ էր ստեղծվում ներքնահարկի և վերերկրյա առաջին հարկի միջև, ամենայն հավանականությամբ փայտե աստիճանների միջոցով։ Վերևում այդ վանդակը բացվում էր մի մուտքի մոտ, որը ձևավորված էր շախմատաձև դասավորված քարերով»[3]։

---

[3] И. А. Орбели, նշվ. աշխ., էջ 122։

Նշվում է, որ ներսում պատերի վրա տեղ-տեղ պահպանվել են սվաղի մնացորդներ։ Այսպես է նկարագրում շենքի ինտերիերը նշանավոր պատմաբան Լեոն. «Սենյակները սիրուն տպավորություն են թողնում, նախ և առաջ այն պատճառով, որ համապատասխանում են մեր ժամանակի շինարարական կարգերին։ Բարձր ու անզարդ են պատերը, առաստաղ չկա։ Անկրկնելի տպավորություն են թողնում մեծ ու լայն պատուհանները, որոնք հին շինություն-



Պարոնի պալատի հատակագիծը. առաջին և երկրորդ հարկեր
(չափագրություն Թ. Թորամանյանի)

ների մասին մեր կազմած հասկացությունն են ջրում։ Մենք սովորել ենք հին եկեղեցիներում, ժամատներում տեսնել նեղ ու փոքրիկ պատուհաններ, մենք գիտենք և այն, որ հին տները լույսն ընդունում էին վերևից, առաստաղում բացած կլոր ծակերից։ Իսկ այստեղ գոնե երկու հատ պատուհան են մնացել, որոնք չէին կարող ուրիշ բանի ծառայել»։ Շարունակելով, Լեոն գրում է, որ դեպի ձորը նայող պատուհանները պարզ են, հստակ, «այստեղ... Ճարտարապետը զարդեր ու քանդակներ չէ շռայլել։ Բայց այստեղ բնություն կա, ամեհի, լայն, հուժկու, որի վսեմությունը նույնիսկ ծիծաղելի է դարձնում ամեն մի արհեստական զարդարանք։ Հասարակ, անպաճույճ, բայց լայն պատուհանից Ծաղկոցաձորի հատակն է երևում, այնտեղ, ցած, շատ ցած։ Ձորի լանջերը, նրանց հետևող դաշտերը և այդ լայնարձակ տեսարանի վերջում Ալաջայի կապույտ շղթան,— մի բնություն է սա, որից ժամերով կշտանալ չի կարելի»[4]։

Ահա ինչպիսի տեղ է ընտրված այս պալատական կառույցի համար, մի կառույց, որը կարծես իր մեջ է մարմնավորել ժողովրդական բնակելի տների՝ փողոցից, հրապարակից անջատվելու, անկոչ հայացքներից խուլ պատերով սահմանազատվելու ձգտումը։ Արտակարգ շքեղ է մշակված պալատի մուտքը, իսկ երկրորդ հարկի լայն բացված լուսամուտը կարծես խոսում է ներսի շքեղության ու հարստության մասին։ Դատելով Թ. Թորամանյանի չափագրությունից, վերին հարկը ունեցել է խաչաձև հատակագիծ, որտեղ կենտրոնական, մոտ 10×10 մ քառակուսի տարածքի չորս կողմերին հպվել են դեպի կենտրոն բացվող մուտքեր ունեցող սենյակներ։ Պալատական այդ կառույցի երկրորդ հարկի լուծումը որոշակիորեն հիշեցնում է Անիի միջնաբերդի խա-

4 Լեո, Անի, Երևան, 1963, էջ 226—229։

չաձև դահլիճը և ամենայն հավանականությամբ վերջինիս հեռավոր արձագանքն է։ Կառույցի առավել ճոխ մշակված հանգույցն է դեպի քաղաք նայող ճակատի վրա բացված երկհարկ շքամուտքը։ Երկու կողմից պարփակված շեղադիր թեք, հարթ պատերով շքամուտքը արտակարգ տպավորիչ է։ Առաջին հարկը շրջապատված է ուղղանկյուն լայն եզրազարդով, որի կենտրոնում էլ տեղավորված է եղել պալատ տանող մուտքը։ Նրա կիսաշրջանաձև երեսակալից տեղում պահպանվել է վերին մասը, որից ցած առկա են բարավորի վերին մասի խճազարդ երեսպատման հետքերը շաղախի վրա։ Ն. Մ. Տոկարսկին ենթադրում է, որ այստեղ ևս դռան բացվածքը լուծված է եղել այնպես, ինչպես տեսնում ենք նույն մուտքի երկրորդ հարկում, որտեղ հորիզոնական, սև-ղանաձև քարերից կազմված բարավորի վրա, սլաքաձև կամարի տակ եղած տարածքը ծածկված է խճազարդ երեսպատումով։ Մուտքից մինչև ուղղանկյուն շրջանակն ընկած ամբողջ տարածքը զբաղեցված է եղել խաչաձև և ուղղանկյուն նուրբ զարդաքանդակներով ծածկված խճազարդ հոդինվածքով, որում խաչաձև քարերը արվել են սև, իսկ ուղղանիստ աստղերը՝ վարդագույն տուֆաքարերից։ Երկրորդ հարկաբաժնի լուսամուտի և՛ շրջանակը, և՛ խճազարդ հարցությունը մշակված է ավելի պարզ ձևերով։ Լուսամուտի առանցքը այստեղ քիչ շարժված է դեպի աջ, և այդ պատճառով շրջանակը ստացվել է ավելի լայն։ Եթե ձախակողմյան մասում առաջին և երկրորդ հարկերի շրջանակները գտնվում են միևնույն ուղղության վրա, ապա աջ կողմում երկրորդ հարկի շրջանակը որոշ չափով դուրս է գալիս առաջին հարկի շրջանակի ուղղությունից։ Բուն լուսամուտը երիզված է հարթ շրջանակով, որի վերին մասում կազմված սլաքաձև կամարի և հորիզոնական բարավորի միջև ստացված նույնպես սլաքաձև հարթությունը երիզված է դարձյալ սև և վարդագույն քարերից կազմված խճազարդով։ Սակայն այստեղ քարերը հարթ են, ինչպես հարթ են նաև մուտքերից մինչև արտաքին շրջանակն ընկած տարածքը երեսպատող բոլոր քարերը։ Մուտքի հորիզոնական բարավորից վեր խճազարդը կազմված է վեցանիստ և եռանկյունաձև քարերի համադրումից, որոնց հիման վրա ստացվել են բավականին մեծ, վեցանիստ աստղեր, ընդ որում ամեն աստղի կենտրոնական վեցանիստը արված է վարդագույն քարից, իսկ եռանկյունաձև ճառագայթները՝ սև քարերից։ Մուտքը շրջանցող տարածքը երեսպատված է արդեն նույն գույնի քարերի շախմատաձև խճազարդով, ընդ որում քարերի շարվածքը շրջված է 45 աստիճանի տակ։

Ինչ վերաբերում է կառույցի նշանակությանը և թվագրությանը, ապա և՛ Ն. Մարը[6], և՛ Հ. Օրբելին[7] անվերապահորեն համարում են այն իշխանական պալատ և թվագրում XII—XIII դդ.։ Թվում է, որ այս շենքը XII դարում պարզապես չէր կարող կառուցվել. քաղաքի անհաստատ դրությունը, ձեռքից ձեռք անցնելը լիովին բացառում էր այդ։ Ամենայն հավանականությամբ այն կառուցվել է ոչ վաղ, քան XIII դարի 20—30-ական թթ., երբ Անին հասել էր իր բարգավաճման բարձր աստիճանին։ Ն. Տոկարսկու ենթադրությամբ, այստեղ է տեղավորվել քաղաքի ինքնավարությունը, և շենքն այսպիսով ոչ թե պալա-

---

[5] Н. М. Токарский, Архитектура Армении IV—XIV вв., Ереван, 1961, стр. 251.

[6] Н. Я. Марр, Ани, М.—Л., 1934, стр. 93.

[7] И. А. Орбели, նշվ. աշխ., էջ 122։

տական, այլ հասարակական մի կառույց է եղել։ Նա գրում է. «Շենքի այժմ էլ գոյություն ունեցող ճակատը, նրա մեծ լոջիայով, որտեղից հնարավոր էր հանդիսավոր կերպով հայտարարել քաղաքային իշխանությունների հրամանները, շատ ավելի համապատասխանում է հասարակական շենքին, քան իշխանական պալատին նրա պարփակ կենցաղով հանդերձ»[8]։ Որպես զուգահեռ նա նշում է պեղումներով հայտնաբերված հյուրանոցների ճակատների մշա-



Պարոնի պալատի ընդհանուր տեսքը

կ

։ Նման դրույթի հետ չի կարելի համաձայնել։ Այն ժխտում է հենց շենքի տեղաբաշխումը քաղաքի հյուսիս-արևմտյան եզրամասում, հեռու կենտրոնական շրջաններից և գլխավոր փողոցից, մի բան, որը բնավ չէր կարող համապատասխանել հասարակական շենքին։ Նշենք, որ նշված հյուրանոցներն իսկ գտնվում էին քաղաքի կենտրոնում, գլխավոր փողոցի վրա։ Մյուս կողմից լավ հայտնի է, որ Պարոնի պալատի դեպի քաղաք նայող պատերը բարձր էին, խուլ և կառույցն իր ընդհանուր դիրքով կարծես մի մեկուսացված ամրացված պալատ լիներ և ոչ հասարակական շենք։ Միակ հատվածը, որը ճարտարապետորեն մշակված է, դա շքամուտքն է իր մեծ, լայն լուսամուտով։

Մեր կարծիքով միանգամայն իրավացի է Վ. Հարությունյանի դրույթը պալատի կենտրոնական մասի ծածկված լինելու մասին։ Բնականաբար հարց է առաջանում՝ ինչպիսին կարող էր լինել այդ ծածկը և ինչ բարձրության վրա է այն եղել։ Դատելով արտաքին ճակատի մեծ լուսամուտի առկայությունից, որը չէր կարող ավելի ցած լինել, քան ենթադրվող առաջին հարկաբաժնի ծածկը. վերջինս պիտի գտնվեր 4—5 մ բարձրության վրա։ Սակայն դժվար չէ տեսնել, թե ինչ անհարիր տպավորություն կթողներ 10×10 մ դահլիճը նման ցածր առաստաղի պայմաններում, մանավանդ որ այն կլիներ համարյա թե մութ, քանզի շրջապատված էր այլևայլ սենյակներով։

Այս հարցում խիստ էական նշանակություն է ստանում Հ. Օրբելու հիշատակությունը ներքին մուտքի մասին։ Ինչպես նշում է Հ. Օրբելին, հուշարձանի ներսում, երկրորդ հարկի մակարդակի վրա (քաղաքի կողմից դա առա-

---

8 Н. М. Токарский, նշվ. աշխ., էջ 252։

9 Վ. Հարությունյան, Անի քաղաքը, Երևան, 1964, էջ 73։

ջին հարկն է), այնտեղ, որտեղ դուրս է գալիս նկուղային մասից դեպի վեր բարձրացող աստիճանավանդակի բացվածքը, եղել է մի մուտք ևս, որը, դատելով պահպանված լուսամուտներից, մշակվել է ճիշտ այնպես, ինչպես գլխավոր մուտքը, սակայն իր բացարձակ չափերով ավելի փոքր է, ավելի համեստ։ Սա հետագայում փակվել է։ Սակայն այստեղ կարևորը մուտքի մշակ-



Պարոնի պալատի գլխավոր մուտքը

ման սկզբունքն է, հար և նման գլխավոր շքամուտքին. այստեղ ևս առկա է սլաքաձև բարավորը և այն շրջանցող հորիզոնական լայն շրջանակը։ Նշված տարրերի միջև եղած տարածքը մշակվել է վարդագույն աստղերից և վեցանիստ սև քարերից տաշված խճաղարդով։ Թե ուր էր տանում այդ մուտքը և

ինչ բաժանումներ կային վերևում, մնում է անհայտ։ Մի բան պարզ է, որ նման շքամուտքը չէր կարող սովորական սենյակի մուտք լինել, մանավանդ, դատելով պահպանված լուսանկարից, շքամուտքը շարունակվել է վեր. այդ մասին է վկայում նրա կողային մասերի «սելջուկյան շղթայի» շարունակումը դռան շրջանակից էլ վեր։ Իսկ սա նշանակում է, որ այստեղ գործ ունենք երկհարկ շքամուտքի հետ, որը թերևս լուծված է եղել հար և նման գլխավոր մուտքին, և դրանից վեր եղել է անշուշտ մի մեծ բացվածք, որը ծառայել է կենտրոնական դահլիճի լուսավորության համար։ Իսկ եթե դա այդպես է, ապա պարզ է դառնում, որ կենտրոնական քառակուսի 10×10 մ տարածքը ունեցել է երկհարկ բարձրություն և ամենայն հավանականությամբ ծածկված է եղել փայտե հազարաշեն գմբեթով։ Այժմ հասկանալի է դառնում նաև գլխավոր ճակատի երկրորդ հարկի մեծ լուսամուտի նշանակությունը, որն իր արտակարգ մեծ չափերով չէր կարող նախատեսված լինել միայն մեկ սենյակ լուսավորելու համար։ Տարակույս չի մնում, որ այն սենյակը, որի մեջ բացվել է այդ լուսամուտը և որն իր հակառակ կողմի պատով հպված է եղել գմբեթածածկ դահլիճին, հենց այդ պատի մեջ էլ պետք է ունենար մի մեծ բացվածք՝ երկհարկ բարձրություն ունեցող դահլիճը լուսավորելու համար։ Որոշակի հիմքեր կան ենթադրելու, որ շքամուտքի հակառակ կողմում ևս եղել է նման լուսամուտ, և պալատական դահլիճը լուսավորվել է նաև մյուս կողմերում բացված լուսամուտների միջոցով։

Ամփոփելով այս նշանավոր աշխարհիկ կառույցի ճարտարապետական ձևերի վերլուծությունը, կարող ենք ասել հետևյալը։ Առաջին, նկուղային հարկը եղել է թաղածածկ, ունեցել է տնտեսական և օժանդակ նշանակություն։ Հիմնական պալատական մասը կազմում էին երկրորդ և երրորդ հարկերը, սենյակների համանման դասավորությամբ։ Գլխավոր մուտքը (որը գտնվում էր շենքի առջև ձգվող հրապարակի մակարդակի վրա) բացվում էր նախամուտքի մեջ, որին հաջորդում էր կառույցի կենտրոնական մասը կազմող քառակուսի բարձր դահլիճը։ Վերջինս եղել է գմբեթածածկ և առանձին աստիճանավանդակով կապված է եղել նկուղային մասի հետ։ Ցած տանող մուտքի մոտ եղել է մեկ այլ մուտք դեպի այն սենյակը, որտեղից աստիճաններով բարձրանում էին երկրորդ հարկի սենյակները։

Այսպիսով, Պարոնի պալատը հանդես է գալիս որպես պալատական հորինվածքի մի յուրովի տիպ։ Եթե Անիի միջնաբերդի պալատի խաչաձև դահլիճը թերևս մեկ հարկանի էր, ապա այստեղ արդեն, բացի նկուղային հարկից, ունենք երկհարկ մի ծավալ, որտեղ կենտրոնական քառակուսի դահլիճն ունի երկու հարկի բարձրություն, միավորում է ամբողջ կառույցը և լուսավորվում չորս կողմերում տեղավորված սենյակների ներքին պատերի մեջ բացված մեծ լուսամուտների լայնանիստ փայտյա գմբեթը պսակող երդիկի միջոցով։

Հայկական աշխարհիկ ճարտարապետության մեջ սա մի նորույթ էր, և նման հորինվածք հայտնի չէր ո՛չ վաղ միջնադարում և ո՛չ էլ Բագրատունյաց շրջանում։ Այստեղ ունենք նշանակալից չափերի հասնող մի պալատական հորինվածք, որի նախատիպերը կարող են համարվել այնպիսի ամրոց-դոնժոնները, ինչպիսին է, օրինակ, Տիգնիսը իր քառակուսի բաց բակով և նրա շուրջը դասավորված երկհարկ սենյակներով։ Այս ամենը պարփակված էր հզոր,

աշտարակներով ուժեղացված պարսպապատով։ Պարոնի պալատը, կառուցված քաղաքի ներսում, անշուշտ կարիք չուներ հզոր պարսպապատերի, թեև այստեղ ևս պատերը խուլ էին և լուսամուտները բացվում էին միայն ձորի կողմը, որտեղից պալատ թափանցելը բացառված էր։ Ուշագրավ են այն զուգահեռները, որոնք նշմարելի են մեզ հետաքրքրող կառույցի և արևմտաեվրոպական քաղաքների պալատական որոշ կառույցների միջև։ Պալատները թեև գտնվում էին ուժեղ պաշտպանված քաղաքների ներսում, բայց և միաժամանակ առանձին վերցրած լավ պաշտպանված էին, հատկապես առաջին հարկերը իրենց ցանցապատ փոքր լուսամուտներով։ Տարակույս չի մնում, որ պալատների տերերը պակաս անհանգստացած չէին քաղաքի բնակիչների ներքին հուզումներից, և նրանց պալատական շենքերը փաստորեն հիշեցնում էին փոքրիկ ամրոցներ։ Այս տեսակետից բնորոշ են XIII—XIV դդ. իտալական քաղաքների ներսում կառուցված ամրացված պալատները (Պիզա, Լուկկա և այլն)։ Հատկապես բնորոշ է Պալացցո դեի Պոդեստան Ֆլորենցիայում (1254—1285 թթ)։ Նույն ձգտումը շարունակվում է իտալական վերածննդի շրջանի մի շարք պալացցոներում։ Որոշ տեղերում սկզբնական շրջանում քաղաքային պալատները շարունակում էին պահպանել իրենց գոնժոնային գծերը։ Սակայն ժամանակի ընթացքում, աշխարհիկ կյանքի զարգացման հետ միասին պալատներում ավելանում են գահլիճները, որոնք լավ լուսավորված էին լինում և ունեին զգալի բարձրություն։ Այդ պրոցեսը խիստ ուշագրավ է ուշ գոթական ճարտարապետության մեջ և առանձնակի ցայտուն է դրսևորվում Ֆրանսիայում և Իտալիայում[10]։

Միջնադարյան քաղաքային պալատներին բնորոշ զարգացման այդ պրոցեսը իր դրսևորումն է գտել նաև Հայաստանում։ Պարոնի պալատը իր բնույթով ներկայացնում է Տիգնիսի գոնժոնատիպ պալատի և իշխանական սովորական պալատական կառույցի սինթեզը, որտեղ վերացել է պարփակ բակը և վեր է ածվել կենտրոնական դասավորություն ունեցող բարձր, գմբեթավոր դահլիճի։ Հայաստանում այդ պրոցեսը տեղի էր ունեցել Թերևս ավելի վաղ, արդեն X դարում, այն շրջանում, երբ հիմնադրվում էին Աղթամարն ու Անին, և իշխաններն ու մեծահարուստները թագավորանիստ այս քաղաքների շահաստաններում էին կառուցում իրենց պալատները։ Դժբախտաբար այդ շենքերից ոչ մեկը չի հասել մեզ։ Միակ քիչ թե շատ բնորոշ օրինակն է աշոտաշեն պարսպապատի մուտքի մոտ կառուցված աշխարհիկ շենքը, թերևս թագավորական հյուրասրահը, որի դեպի քաղաք ուղղված պատերը դարձյալ խուլ են, և լուսամուտները այստեղ էլ բացվել են անդնդախոր կիրճի եզրով ձգվող պատի մեջ։

Այս ամենից հետո մեզ մնաց անդրադառնալ Պարոնի պալատ կոչված կառույցի բնույթին։ Դժվար չէ տեսնել, որ այն իր հատակագծային և ծավալային ձևերով զգալիորեն տարբերվում է սովորական պալատներից, ասենք, նույն միջնաբերդի պալատական շենքից։ Բանն այն է, որ իշխանական բնակելի պալատները, որպես կանոն, բնակելի սենյակներից ու շքեղատեսիլ դահլիճներից բացի պետք է ունենային նաև բազմաթիվ տնտեսական սենյակներ, կոմունալ հարմարություններ և այլն։ Մինչդեռ Պարոնի պալատ կոչված շեն-

[10] «Всеобщая история архитектуры в 12 томах», т. IV, М., 1966, стр. 397.

քում վերջիններս չկան։ Շքեղազարդ մուտքը անմիջապես տանում է դեպի կենտրոնական հանդիսավոր դահլիճը, որի չորս կողմում էլ հպված են ոչ փոքր սենյակներ։ Նույն դահլիճից մի այլ մուտք տանում է դեպի ընդարձակ ներքնահարկը, որի լայնանիստ լուսամուտներից հիանալի տեսարաններ էին բացվում դեպի Անին երիզող կիրճերը։ Ահա այս առումով դժվար չէ որոշակի ընդհանրություններ նշմարել Պարոնի պալատի և Բագրատունյաց շրջանի թագավորական ընդունարան-հյուրատան, այսպես կոչված Մանուչեի մզկիթի միջև։ Առանձնակի ուշագրավ է այն հանգամանքը, որ երկու շենքերն էլ կառուցվել են քաղաքի պարսպապատի մուտքերի մոտ, երկուսն էլ տեղաբաշխված են ձորաբերանին և ունեն ընդարձակ, լուսավոր ներքնահարկեր։ Ճիշտ է, Պարոնի պալատում առկա են դահլիճին հարող այլևայլ սենյակներ, որոնք չկան Մանուչեի մզկիթում, սակայն դա թերևս հնարավոր է բացատրել վերջինիս՝ պալատից ոչ հեռու գտնվելու հանգամանքով, երբ նշանավոր հյուրերին հանդիսավոր կերպով ընդունելուց հետո անմիջապես ուղեկցում էին պալատ։ Մինչդեռ Պարոնի պալատը գտնվում էր արդեն սմբատաշեն պարսպի եզրամասում, քաղաքի հանդիպակաց ծայրին և, ամենայն հավանականությամբ, պատվավոր հյուրերի նստավայրն էր այնքան ժամանակ, որքան որ նրանք հյուր էին Անիում։ Ահա այդ էլ պայմանավորում էր թե՛ կառույցի տեղաբաշխումը քաղաքի մուտքից ոչ հեռու, թե՛ նրա խուլ, բարձրադիր պատերը՝ ուղղված դեպի քաղաքի փողոցները և միայն մեկ, շքեղազարդ մուտքի առկայությունը, որը բացվում էր կառույցի առջև փռված հրապարակի վրա։

Այսպիսով, Մանուչեի մզկիթի և Պարոնի պալատի՝ տարբեր պատմական շրջաններին պատկանող այդ նշանավոր շենքերի ուսումնասիրությունը և համադրությունը Անիի այլ աշխարհիկ կառույցների հետ, բերում է այն եզրակացության, որ այստեղ ունենք թագավորական-իշխանական հյուրատունն-նստավայրի մի ուշագրավ օրինակ։ Դրանք շենքեր են, որտեղ հանգրվանել են Անիի թագավորների և հետագայում նրա կառավարիչների բարձրաստիճան հյուրերը, իրենց շքախմբի հետ միասին (դեսպաններն ու մեծահարուստները) և այդ շենքերը եղել են նրանց տրամադրության տակ այնքան ժամանակ, որքան նրանք հյուրընկալվել են Անիում։

* * *

Իր ճարտարապետական հորինվածքներով Պարոնի պալատին են մոտենում Անիի հյուրատները։ Այս հանգամանքը պատահական չէր։ Եթե Պարոնի պալատը նախատեսված էր բարձրաստիճան, «կառավարական» մակարդակով ընդունվող հյուրերի համար, ապա Անին պետք է ունենար նաև քաղաք եկող բազմաթիվ քարավանների տերերի հյուրընկալման վայրեր։ Միջնադարյան քաղաքի անասելի խիտ կառուցապատման պայմաններում քարավանները հանգրվանում էին մայրաքաղաքի արվարձաններում, իսկ նրանց մեծահարուստ տերերը հյուրընկալվում էին իրենց շքեղությամբ պալատական կառույցներին չզիջող հյուրատներում։ Այդպիսի երկու հյուրատուն էլ, հպված միմյանց, բացվեցին 1908 թ. պեղումների ժամանակ։ Նրանք տեղավորված են եղել քաղաքի համարյա կենտրոնում, Առաքելոց եկեղեցուց ոչ հեռու։ Երկու շենքերն էլ պեղումների պահին ամբողջովին կործանված էին. պահպանվել էին պատերի ներքևի մասերը միայն և առանձին մանրամասներ։ Առավել ճոխ են մշակված եղել շքամուտքերը, որոնց մանրամասների հայտնաբերումը

Թ. Թորամանյանին հնարավորություն տվեց պատկերելու նրանց նախնական տեսքը։ Միմյանց կից այդ շենքերի կողմնորոշումը պայմանավորված է եղել փողոցի ուղղությամբ, ընդ որում դեպի փողոց են դուրս եկել հյուրատների նեղ ճակատները։ Շենքերից յուրաքանչյուրի կոմպոզիցիոն կենտրոնն է կազմել երկար, սալահատակված դահլիճը, որի երկայնական կողմերում էլ տեղավորված են եղել առանձին սենյակներ։ Փողոցի վրա է բացվում նաև գլխավոր շքամուտքը։ Հյուրատները եղել են երկհարկ. այդ են հաստատում ոչ միայն շքամուտքի երկհարկ հորինվածքը, այլև ներսում դեպի վեր տանող պահունակային աստիճանների պահպանված մնացորդները։ Դահլիճի հակառակ կողմում եղել են սենյակներ և այստեղ է տեղադրված եղել հյուրատուն բերող ևս մի մուտք։ Կենտրոնական սալահատակված տարածքի երկու կողմերում ձգվել են որոշ բարձրություն ունեցող, դարձյալ սալահատակված մայթանման հարթակներ, որոնց վրա էլ բացվել են կողային սենյակների մուտքերը[11]։

Դահլիճի կենտրոնում, հատակի հարթության վրա տեղավորված է բավականին մեծ, մի քարի մեջ փորված ջրավազանը։ Կողային սենյակները մեծ չեն. նրանց մեծ մասի լայնությունն է 2,5 մ, երկարությունը՝ 5 մ։ Ամեն կողմում առաջին հարկում կան ինչական սենյակ։ Ուշագրավ է, որ դրանք նույնատիպ չեն. բացի այն, որ կան տարբեր լայնության սենյակներ, հյուսիսային կողմինները ավելի լայն են և ունեն ավելի մեծ խորություն։ Բոլոր սենյակներն էլ եղել են թաղածածկ, ընդ որում թաղերը հենվել են քարե միջնորմ-պատերի վրա։ Որոշ սենյակներ ունեցել են նկուղներ և բուխարիկներ։ Սակայն ոչ մի տեղ չի պահպանվել դռան որևէ հետք, և Հ. Օրբելին իրավացիորեն ենթադրում է, որ մուտքերը ծածկվել են վարագույրներով։ Իսկ սա ինքնին ցույց է տալիս, որ հյուրատան կենտրոնական տարածքը ոչ թե բաց բակ է եղել (ինչպես ենթադրում են որոշ ուսումնասիրողներ), այլ պարփակ մի դահլիճ, որն ամենայն հավանականությամբ ունեցել է երկու հարկի բարձրություն և լուսավորվել է նեղ ճակատային կողմերից ու վերևից, երդիկի միջոցով։

Ինտերիերի մշակումից համարյա թե ոչինչ չի պահպանվել, եթե չհաշվենք որոշ սենյակների մուտքերի երեսակալները։ Անհամեմատ ավելի շքեղ են ձևավորված եղել փողոց դուրս եկող «երկհարկ» շքամուտքերը, որոնց ձևերը հանգամանորեն պատկերել է Թ. Թորամանյանը։ Շքամուտքերն է՛լ ավելի շքեղ ու ճոխ են եղել, քան վերը քննարկված Պարոնի պալատի շքամուտքը, ընդ որում հյուրատներում նրանք բնավ էլ միևնույն լուծումը չեն ունեցել. տարբեր են եղել և՛ սյուժետային քանդակները, և՛ զարդաձևերը։ Եթե Պարոնի պալատում առաջին հարկի մուտքը ավարտվում է կիսաշրջանաձև կամարով և այս առումով խիստ տարբերվում է երկրորդ հարկի լուսամուտի ձևերից, ապա հարավային հյուրանոցի երկու բացվածքներն էլ նույնատիպ են, թեև բուն մուտքը ավելի լայն է, քան երկրորդ հարկի լուսամուտը։ Այն պարփակված է կարմիր և սև սեղանաձև քարերից կազմված հորիզոնական ուժեղ բարավորով, որից վեր դտնվող տիմպանի ճակատը մշակված է իճազարդ կոմպոզիցիայով, կազմված սև տուֆից կերտված հնգաթև աստղերից և վարդագույն տուֆից կերտված բազմանիստներից։ Մուտքը երիզող երկու հյուսածո դլանազարդերը շրջանակում են բարավորը և սլաքաձև պարփակում բացված-

11 И. А. Орбели, նշվ. աշխ., էջ 10։

քը։ Նրանից աջ և ձախ տեղավորված են միմյանց դիմադրավող առյուծների և վիշապների քանդակներ։ Երկրորդ հարկի լուսամուտը երիզված է գլանաձև որմնասյուներով, որոնք ունեն իրենց գնդաձև խարիսխներն ու խոյակները։ Այդ խոյակներից վեր էլ բարձրանում է ճոխ մշակում ունեցող սլաքաձև կամարաղեղը։ Բացվածքից մինչև ուղղանկյուն շրջանակը եղած տարածքը ձևավորված է, ինչպես և Պարոնի պալատում, շախմատաձև, 45 աստիճանի տակ շրջված որմածքով։ Սլաքաձև տիմպանը մշակված է վեցանիստ վարդագույն աստղերից և սև շեղանկյունիներից կազմված խճազարդերով, մի սիստեմ, որը կար արդեն Պարոնի պալատի լուսամուտի տիմպանի վրա։ Ճիշտ է, եթե այնտեղ աստղերը հպված էին միմյանց և նրանց միջև ազատ տարածություն չէր մնում բնավ, իսկ իրենք աստղերն էլ հարթ էին, սև գույնի եռանկյունաձև թևերով, ապա այստեղ աստղերը արդեն մեկ ամբողջական, վարդագույն քարից են, ծածկված են նուրբ զարդաքանդակներով և նրանց միջև տեղավորված են սև տուֆից կերտված շեղանկյուններ։ Ինչ վերաբերում է բացվածքները երիզող շրջանակներին, ապա դժվար չէ տեսնել, որ առաջին հարկաբաժնում այն շատ ավելի հարուստ և ճոխ մշակում ունի։ Այս անշուշտ պատահական չէր. այդ շրջանակը տեղավորված էր շատ ավելի ցած և դիտելի էր մոտիկ տարածությունից։ Մառը նշում է, որ Թ. Թորամանյանի վերակազմության մեջ «չկա և ոչ մի մանրամասն, և ոչ մի գիծ, որը վավերագրված չլիներ պեղված նյութերով։ Ընդհակառակը, գծագրի համեմատաբար փոքր մասշտաբը ստիպել է բաց թողնել հյուսածո զարդաձևերի որոշ հանգույցներ, հիմնական գծերը և մանրամասները ավելի պարզ և հստակ պատկերելու նպատակով»[12]։



Հյուրանոցների հատակագիծը
(չափագրություն Թ. Թորամանյանի)

Հյուրանոցները Մառը թվագրում է XII—XIII դդ.։ Թվում է, թե ճիշտ է Ն. Տոկարսկին, երբ նշում է, որ XII դարում Անին գտնվում էր սելջուկների տիրապետության տակ, և ոչ մի նախադրյալ չկար այդ շրջանում նման շքեղ շենքերի կառուցման համար։ Ապա նա գրում է, որ «հյուրատներում տարբեր գարդաձևերի օգտագործումը հիմք է տալիս ենթադրելու, որ նրանք միաժամանակ չեն կառուցվել և նրանց միջև կա առնվազն կես դար տարբերություն, սակայն թվագրությունները XIII դարից այն կողմ չեն անցնում[13]։ Հանգամանորեն հետազոտելով շքամուտքերի ձևերը, Ն. Տոկարսկին եզրակացնում է, որ ավելի վաղ է կառուցվել հարավային հյուրանոցը, իսկ հյուսիսայինը նրան է հպվել մի քանի տասնամյակ հետո[14]։ Ինչ վերաբերում է հյուրանոցների ծավալատարածական ձևերին, ապա պետք է ասել, որ այս բնագավառից մեզ

[12] Н. Я. Марр, նշվ. աշխ., էջ 72։
[13] Н. М. Токарский, նշվ. աշխ., էջ 263։
[14] Նույն տեղում։

շատ քիչ բան է հասել։ Հայտնի են նրանց հատակագծերը, շքամուտքերը, հարավային հյուրանոցի արևելյան մասում պահպանվել են դեպի երկրորդ հարկը տանող աստիճանների մնացորդները։ Բացառված չէ, որ նման աստիճաններ եղել են նաև հյուսիսային հյուրանոցում։ Մեր կարծիքով հյուրատների ծավալային ձևերի վերակազմության հարցում որոշ չափով կարող են օգնել Պարոնի պալատի ձևերը, մի հուշարձան, որի մուտքի հանգույցը մոտ է հյուրանոցների շքամուտքերին, իսկ կառույցն ամբողջապես, ինչպես նշվեց վերը, որոշակի ընդհանրություններ է ունեցել հյուրանոցային հասկացողության հետ՝ ծառայելով Անի ժամանած դեսպանությունների և կամ բարձրաստիճան հյուրերի համար որպես նստավայր։ Այստեղ ակնհայտ են նաև որոշակի հորինվածքային ընդհանրություններ, թեև Պարոնի պալատ կոչվող շենքում կենտրոնական դահլիճը խաչաձև է, իսկ հյուրանոցներում՝ ուղղանկյուն և ամենայն հավանականությամբ ծածկված է եղել թաղով և ոչ գմբեթով, ինչպես Պարոնի պալատում։ Հյուրատների ծավալային հորինվածքների պատկերման գործում մենք ունենք երկու հիմնական ելակետ։ Ամենից առաջ տարակույս չի կարող լինել, որ այդ շենքերը եղել են երկհարկ։ Մյուս կողմից, որոշակի հիմքեր կան ենթադրելու, որ երկրորդ հարկում սենյակներն ունեցել են նույն դասավորությունը, ինչ առաջին հարկում. այդ պայմանավորված էր թաղերի համար հենարաններ հանդիսացող միջնորմ-պատերի տեղաբաշխումով։ Բացի այդ, սենյակներում դռների բացակայությունը և նրանց բացվածքների վարագույրներով ծածկված լինելը նույնպես տարակույս չեն թողնում, որ հյուրանոցների կենտրոնական ուղղանկյուն տարածքները ոչ թե բաց բակ են եղել, այլ պարփակ դահլիճներ, ինչպես այդ ունենք վաղ միջնադարյան պալատական կառույցներում։ Իսկ եթե այդպես է, ապա դահլիճները պետք է ունենային երկու հարկի բարձրություն, իսկ նրանց ծածկերը՝ տեղավորված լինեին երկրորդ հարկի սենյակների ծածկից էլ վեր և ունենային վերևից լուսավորող երդիկներ։ Որ այդ ամենայն հավանականությամբ այդպես էլ եղել է, վկայում է շքամուտքի հորինվածքը և ամենից առաջ՝ երկրորդ հարկի մեծ, լայն լուսամուտը։ Եվ իսկապես. բնականաբար հարց է առաջանում՝ ի՞նչ նպատակի հա-



Հյուրատան մուտքը
(վերակազմություն Թ. Թորամանյանի)

մար էր մուտքից վեր տեղավորվել այդ լայնանիստ լուսամուտը և ի՞նչ էր լուսավորում։ Ինքնին հասկանալի է, որ նման մի բացվածք չէր կարող նախատեսված լինել մեկ սենյակի լուսավորության համար։ Համանման հարցի հետ մենք հանդիպեցինք Պարոնի պալատում և տեսանք, որ այն բացվել է դահլիճի հետ անմիջականորեն առնչվող, նրա հետ լայն, բաց կամարով հաղորդակցվող սենյակում, որն ըստ էության սենյակ էլ չէ, այլ մի լոջիա, որտեղ նստած հյուրերը կարող են դիտել և՛ հյուրատան առջև փռված հրապարակը, և՛ հյուրատան շքեղազարդ դահլիճը՝ նրա կենտրոնում տեղավորված ջրավազանով։ Այսպիսով, հյուրանոցների նեղ ճակատային կողմերում տեղավորված ընդարձակ, լավ լուսավորված և դահլիճների հետ անմիջականորեն հաղորդակցվող այս սենյակները ամենայն հավանականությամբ ծառայել են որպես հյուրերի հանդիպման, հանդստի վայր։ Որ հյուրանոցը իսկապես երկհարկ է եղել, վկայում են վեր տանող պահունակային աստիճանների մնացորդները։ Անշուշտ, ինչ-որ ձևով այդ սենյակների բնակիչները հաղորդակցվել են առաջին հարկի հետ, այլապես պետք է ենթադրել, որ բոլոր սենյակները եղել են միջանցիկ, մի բան, որը կլիներ խիստ անտրամաբանական։ Ահա այս առնչությամբ չեն կարող ուշադրություն չգրավել առաջին հարկում, դահլիճի ամբողջ երկարությամբ, երկու կողմի սենյակների առջև ձգվող հարթակները, որոնք ունեն 1,5 մ լայնություն և մեկ աստիճան բարձր են դահլիճի հատակից։ Հարթակները յուրովի «մայթի» դեր են կատարել և հյուրանոցի առաջին հարկի բնակիչները նրանց վրայով են անցել դեպի իրենց սենյակները։ Սակայն թվում է, որ նույն այս հարթակների եզրերին տեղավորված փայտյա սյուների վրա էլ հենվել է այն ներքին նեղ պատշգամբը, որը ձգվել է երկրորդ հարկի սենյակների երկայնքով և հաղորդակցվել հյուրատան ճակատային կողմերում տեղավորված, առաջին հարկից բարձրացող պահունակային աստիճանների հետ։ Այդ պատշգամբի վրայով է, թերևս, որ իրենց սենյակներն են անցել երկրորդ հարկի բնակիչները։

Դժվար է ասել, թե ինչպես է ծածկված եղել դահլիճը՝ թաղերո՞վ, թե՞ հաջորդական դասավորված հազարաշեններով և կամ ժողովրդական ճարտարապետության մեջ հայտնի փայտե ծածկերի այլ սիստեմներից մեկով։ Մեր ավելի հավանական է թվում, որ դահլիճները ծածկված են եղել թաղերով։ Այդ են հաստատում ոչ միայն վանական սեղանատների ծածկերի ձևերը, այլև դահլիճների ամբողջ երկայնքով ձգվող երկհարկ, թաղածածկ սենյակների առկայությունը, որոնք հուսալի հենարան լինելով թաղերի համար՝ լիովին կապահովեին կառույցի կայունությունը։ Նման լուծումը լավ հայտնի էր դեռևս վաղ միջնադարում. հիշենք Զվարթնոցի գահասրահը, որը, ճիշտ է, մեկ հարկանի էր, սակայն դժվար չէ տեսնել կոնստրուկտիվ ձևերի միջև եղած որոշակի ընդհանրությունը։

Ինչ վերաբերում է լուսավորության հարցին, ապա սենյակները ամենայն հավանականությամբ լուսավորվել են երկայնական ճակատների վրա բացվող նեղ, ձգված համաչափություններ ունեցող (եկեղեցիների ավանդատների լուսամուտները հիշեցնող) բացվածքներով։ Ավելի բարդ է եղել դահլիճների լուսավորության հարցը։ Բացի նեղ ճակատային կողմերում դասավորված լուսամուտներից, նրանք ամենայն հավանականությամբ լուսավորվել են կողային սենյակների ծածկերից վեր, մեծ թաղերի սկզբում տեղա-

վորված ոչ մեծ լուսամուտների միջոցով։ Նման լուսամուտների գոյությունը բնավ էլ չէր բացառում երդիկների օգտագործման հնարավորությունը, որոնք ոչ միայն անմիջական լույսի աղբյուր էին հանդիսանում, այլև անփոխարինելի էին օդափոխությունը ապահովելու գործում։

Դատելով հյուրանոցների շքամուտքերի շքեղությունից, Անիի բնակելի տների, պալատական կառույցների, Մանուչեի մզկիթի ինտերիերներից, Անիի հյուրանոցները ևս պետք է որ ունենային արտակարգ հարուստ ձևավորում, ընդ որում, եթե ճիշտ է մեր ենթադրությունը փայտյա ներքին պատշգամբի առկայության մասին, ապա նրանք ևս պետք է աչքի ընկնեին իրենց նրբակերտ ձևերով և լավ մշակումով։ Այդ են հաստատում փայտագործության այն հիանալի նմուշները (գոներ, գրապալներ, Անիի պալատի փայտյա սյուներ և այլն), որոնք մեզ են հասել միջնադարյան հուշարձաններից։

Ամփոփելով, կարող ենք ասել, որ Անիի հյուրատների ձևերում մի կողմից իրենց անդրադարձն են գտել հայկական աշխարհիկ ճարտարապետության մեջ դեռևս վաղ միջնադարում հայտնի հորինվածքների ձևերը, իսկ մյուս կողմից՝ նրանց վրա ակնհայտ է նոր ժամանակների, նոր ոճական ուղղության որոշակի կնիքը։ Նրանք հանդես են գալիս որպես հարուստ, դահլիճաշահ քաղաքին բնորոշ կառույցներ, և նրանց ճարտարապետական կերպարը խիստ մեծ նշանակություն է ունեցել քաղաքի անսամբլային կառուցապատման, նրա ամենակարևոր հանգույցների և հրապարակների կազմավորման հարցում։ Անիի քաղաքաշինական սկզբունքների բացահայտման հարցում մինչև այժմ հիմնականն ու որոշիչը համարվել են պաշտամունքային կառույցները։ Չբացառելով այդ, չբացառելով ուղղագիր, վերասլաց այդ կոթողների դերն ու նշանակությունը, չենք կարող չնշել, որ միջնադարյան քաղաքի կերպարը ոչ պակաս չափով կանխորոշում էր աշխարհիկ կառուցապատումը և ահա այստեղ է, որ այնքան մեծ նշանակություն են ստանում քաղաքային մոնումենտալ աշխարհիկ կառույցները. առաջին հերթին իշխանական պալատները, մեծահարուստների մենատները և, վերջապես, այնպիսի աչքի ընկնող շենքեր, ինչպիսիք էին քաղաքի հյուրատները։

ДВОРЦЫ-РЕЗИДЕНЦИИ АНИ

Доктор архитектуры С. Х. МНАЦАКАНЯН

(Резюме)

Параллельный анализ двух светских сооружений Ани, возведенных в разное время, показывает, что они, по всей вероятности, были дворцами-резиденциями и предназначались для прибывающих в столицу высокопоставленных гостей. Первое из этих зданий, известное под именем «мечети Мануче», в действительности не что иное, как граж-

данская постройка эпохи Багратидов, возведенная во второй половине X в. Памятник находится у восточного края стен царя Ашота, у входа в город, на краю обрыва. Второе сооружение—так называемый «дворец Парона»—возведено уже в XIII в., у западного завершения стен царя Смбата, также близ обрыва, около входа в Ани. По своей архитектурной композиции оба памятника представляют собой сочетание укрепленного городского дворца с гостиницей. Это особенно четко прослеживается в «дворце Парона», где налицо большой центральный зал, перекрытый, по всей вероятности, куполом, и размещенные вокруг зала комнаты. Высокие глухие стены надежно защищали дворец, а на площадь выходил пышно разработанный портал единственного входа.

Сравнительно хорошая сохранность «дворца Парона» позволяет восстановить первоначальную структуру двух анийских гостиниц, ядром которых был высокий сводчатый зал с двухэтажными комнатами по его обеим сторонам. На правомерность этой аналогии указывают как одинаковое решение входов «дворца Парона» и обеих гостиниц, так и значительная близость декоративной разработки порталов входов указанных сооружений.